

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Բողոք բերող անձ՝

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության

կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ-փաստաբան՝

Կարեն Մեժլումյան

Արտոնագիր՝ 110

Հասցե՝ Երևան, Մաշտոցի 33/1, 12 տարածք

Գործին մասնակցող անձ՝

Պատասխանող՝

«Աշտարակ-Կաթ» ՓԲԸ տնօրեն՝

Ստեփան Ասլանյան

Հասցե՝ 0069, Երևան, Զեյթուն, Դրոյի փող. 13

Բողոքարկվող դատական ակտ՝

ՀՀ վարչական դատարանի թիվ

ՎԴ/0092/05/12 գործով ՀՀ վարչական

վերաքննիչ դատարանի 23.12.2013թ. որոշում

22.01.2014թ.

Վ Ճ Ռ Ա Բ Ե Կ Բ Ո Ղ Ո Ք

Նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով

I. Գործի դատավարական նախապատմությունը

ՀՀ վարչական դատարանը քննել է ՎԴ/0092/05/12 վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Ասլանյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին:

Դատարանի 26.03.2013թ. վճռով հայցը մերժվել է:

Վճռի դեմ բերվել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 23.12.2013թ. որոշմամբ բողոքը մերժվել է:

II. Պատճառաբանական մաս

1. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1) «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն, այսուհետ՝ Կազմակերպություն երկու անգամ հարցմամբ դիմել է «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Ստեփան Ասլանյանին, խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. *Ձեր կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց:*

2. *Խնդրում ենք տրամադրել ցանկը, թե Ձեր ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՞ ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է՞:*

2) «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ս. Ասլանյանի կողմից «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահին երկու անգամ պատասխան է տրվել այն մասին, որ. *«Ի պատասխան 07.11.2011թ. 149-ի 5 գրության (ստացված 14.11.2011թ.-ին), ինչպես նաև, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության և օրենսդրության համապատասխան*

դրույթներով, տեղեկացնում ենք, որ.

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ «Կաթնափոշի» հասկացությունը: Դրա փոխարեն սահմանված է, օրինակ՝ «անարատ չոր կաթ» արտահայտությունը, որն ստացվում է բնական կաթից:

2) Մեր ընկերության կաթնամթերքների բոլոր արտադրատեսակներն էլ արտադրվում են բնական կաթից, իսկ արտադրված կաթնամթերքի արտադրատեսակների մեջ բնական կաթի քանակության վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր արտադրատեսակի համար ներկայացված է մեր ընկերության կողմից արտադրվող և վաճառվող արտադրանքի համապատասխան մակնշման մեջ, որը նույնպես ՀՀ օրենսդրության պահանջն է»:

3) «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ս. Ասլանյանի ներկայացուցիչը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում 29.11.2013թ. դատական նիստի ժամանակ պատասխանելով դատարանի և մեր կողմի հարցերին բազմիցս հայտարարեց, որ իրենց համար պարզ է եղել, թե ինչ տեղեկատվություն է պահանջում հայցվորը, մասնավորապես, իրենց համար պարզ է եղել, որ հարցման մեջ «բնական կաթ» նշումը վերաբերում է հենց կաթին, կովից կթած հեղուկ կաթին, իսկ կաթնափոշին էլ՝ վերաբերում է չոր կաթին, կաթի փոշուն:

4) «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի արտադրատեսակների մակնշումների մթերքի բաղադրության մեջ տեղեկատվություն չկա «անարատ կաթի», «անարատ չոր կաթի», «չոր յուղազերծ կաթի», «կաթնային չոր շիճուկի» և (կամ) «անարատ չոր սերուցքի» գանգվածային մասերի վերաբերյալ, ըստ՝ տոկոսների:

2. Բողոքում բարձրացված իրավական հարցերը

1) Վերաքննիչ դատարանն իրավասու՞ է արդյոք դատական ակտը հրապարակել օրենքով սահմանված 15-օրյա ժամկետն ավարտվելուց հետո, առանց գործի քննությունը վերսկսելու:

2) Կաթնամթերքի պիտակի վրա պետք է մակնշված լինի մթերքի բաղադրության մեջ «անարատ կաթի», «անարատ չոր կաթի», «չոր յուղազերծ կաթի», «կաթնային չոր շիճուկի» և (կամ) «անարատ չոր սերուցքի» գանգվածային մասերը՝ տոկոսներով, թե՛ ոչ:

3. Բողոքի պատճառաբանությունը և հիմնավորումները

Գտնում են, որ վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի խախտմամբ և ենթակա է բեկանման, հետևյալ պատճառաբանությամբ:

1) Վերաքննիչ դատարանը 29.11.2013թ-ին ավարտելով բողոքի քննությունը, հայտարարեց, որ դատական ակտը կհրապարակվի 20.12.2013թ-ին, ինչը սահմանված 15-օրյա ժամկետի վերջին օրն էր, հաշվի առնելով նաև այդ ժամանակ գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի այն դրույթը, համաձայն որի. «Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը»:

Վերաքննիչ դատարանը, սակայն, առանց վերսկսելու գործի քննությունը, որպիսի իրավունք ուներ, դատական ակտը հրապարակեց 23.12.2013թ-ին, այսինքն 15-օրյա ժամկետի ավարտից հետո, որպիսի իրավունք չունեի, ինչով էլ խախտեց ստորև ներկայացվող իրավանորմերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝

- 117.17 հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վերաքննիչ դատարանի դատական

ակտերը հրապարակվում և դատավարության մասնակիցներին են ուղարկվում վարչական դատարանի դատական ակտերի համար սույն օրենսգրքով սահմանված կարգով»:

- 112 հոդվածի համաձայն. «Վարչական դատարանի ... գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման ... նկատմամբ տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124 հոդվածի համաձայն. «Դատարանի վճիռը հրապարակվում է գործի քննությունն ավարտելուց հետո՝ 15 օրվա ընթացքում»:

ՀՀ դատական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն. «Դատարաններն արդարադատությունն իրականացնում են Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին և օրենքներին համապատասխան»:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն. «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա»:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

Վերը նշված փաստերի և իրավական նորմերի համադրությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանը բողոքարկվող դատական ակտը կայացրել է գործի քննության ավարտը հայտարարելուց և օրենքով սահմանված 15-օրյա ժամկետը լրանալուց հետո, որպիսի իրավունք չունեի, ուստի և խախտել է վերը նշված նորմերի պահանջները:

Գտնում են, որ բողոքարկվող դատական ակտի կայացման նման խախտումը այդ դատական ակտը բեկանելու հիմք է, քանի որ իրավական պետությունում նման դատական ակտը չի կարող գործել և հետևանքներ առաջացնել:

2) Պատասխանողի ներկայացուցիչը վերաքննիչ դատարանում պատասխանելով դատարանի և հայցվոր կողմի հարցերին բազմիցս հայտարարեց, որ իրենց համար պարզ է եղել, թե հայցվորն ինչ տեղեկատվություն է ցանկացել ստանալ, մասնավորապես, որ հարցման մեջ «բնական կաթ» նշումը վերաբերում է հենց կաթին, կովից կթած հեղուկ կաթին (այդ օրինակներ է բերվել, այդ թվում նախագահող դատավորի կողմից), իսկ կաթնափոշին վերաբերում է չոր կաթին, կաթի փոշուն, այսինքն պատասխանողը սուբյեկտիվորեն ընկալել է, թե ինչ տեղեկատվություն է ցանկանում ստանալ հայցվորը, որ ցանկանում է ստանալ տեղեկատվություն այն մասին, թե Ընկերության կաթնամթերքը արտադրվում է բնական, հեղուկ կաթից, թե՞ կաթի փոշուց (չոր կաթից), ինչպես նաև տրամադրել ցանկն այն մասին, թե կաթնամթերքներից որն է բնական, այսինքն հեղուկ կաթից արտադրվում և որը ոչ, այսինքն կաթի փոշուց:

Դատարանը, սակայն, որոշման մեջ չնշելով այդ մասին, որ պատասխանողը սուբյեկտիվորեն ընկալել է թե ինչ տեղեկատվություն է ցանկանում ստանալ հայցվորը, հետևություն է արվել, որ. «ՀՀ կառավարության 21.12.2006թ. թիվ 1925-Ն որոշմամբ հաստատվել է կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը (այսուհետ նաև՝ Կանոնակարգ), որը տվյալ դեպքում միակ իրավական ակտն է, որով սահմանված են կաթի և կաթից պատրաստվող արտադրանքի, դրանց բաղադրիչների, արտադրողության տեխնիկական կանոններին, արտադրանքի մակնշման հասկացությունները և ներկայացվող պահանջները, հետևաբար

«Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերությունն իր արտադրությունն կազմակերպելիս ուղղակի պարտավոր է առաջնորդվել Կանոնակարգի պահանջներով և ըստ դրա՝ տվյալ դեպքում փնտրվող տեղեկատվությունը՝ ներկայացված ձևակերպմամբ, սուբյեկտիվորեն ընկալել Կանոնակարգի սահմանումների ու պահանջների համատեքստում, ինչն էլ տեղի է ունեցել, հաշվի առնելով տեղեկատվության տրամադրման հարցմանը ներկայացված պատասխանի բովանդակությունը»:

Գտնում են, որ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6 և 22 հոդվածների պահանջները, չզնահատելով պատասխանողի ներկայացուցչի բացատրությունն այն մասին, որ պատասխանողը ընկալել է, թե ինչ տեղեկատվություն է ցանկանում ստանալ հայցվորը:

Շարունակելով վերաքննիչ դատարանը նշում է. *«Վերաքննիչ դատարանը, սույն որոշմամբ չվերարտադրելով Կանոնակարգում սահմանված արտահայտություններն ու եզրույթները, փաստում է, որ Կանոնակարգում որևէ կերպ սահմանված, բացահայտված չեն տվյալ դեպքով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից փնտրվող տեղեկատվության ձևակերպմամբ նշված «բնական կաթ», «կաթնափոշի» հասկացությունները, ինչպես նաև, հաշվի առնելով նույն Կանոնակարգում գետեղված սահմանումներն ու կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջներն արձանագրում է, որ կաթի, կաթնամթերքի արտադրությունում օգտագործվող բաղադրիչները հանդիսանում են ոչ «արհեստական» հետևաբար՝ «բնական» կաթի տարբեր տեխնոլոգիական մշակման արդյունքում ստացած նյութերը, օրինակ «կաթի չոր յուղագերց մնացորդ», «անարատ չոր կաթ», «անարատ չոր սերուցք» և այլն»:*

Սա այն դեպքում, երբ բազմաթիվ նորմատիվ ակտերում¹ օգտագործվում է հենց կաթի փոշի հասկացությունը, կաթի փոշին օբյեկտիվորեն գոյություն ունի, թեկուզև կառավարության որոշումներից մեկում դա անվանված լինի «անարատ չոր կաթ» և պատասխանողն էլ հենց այդպես է հասկացել հարցը, այսինքն՝ որ արտադրատեսակներն պատրաստվում հեղուկ կաթից և որը՝ կաթի փոշուց:

Այսպիսով, ակնհայտ է, որ պատասխանողը չի տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե Ընկերության որ արտադրանքն է արտադրվում կաթի փոշուց:

Պատասխանողը հասկանալով թե ինչ տեղեկատվություն է ցանկանում ստանալ հայցվորը, չի տրամադրել ամբողջական և հավաստի տեղեկատվություն, սակայն վերաքննիչ դատարանը համարել է, որ Ընկերությունը տրամադրել է հայցվորի կողմից փնտրվող տեղեկատվությունը, ինչով էլ սխալ է մեկնաբանել և խախտել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օերքնի 12-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ 3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն:

3) Վերաքննիչ բողոքում պատճառաբանվել էր, որ. *«Ընկերության որևէ արտադրանքի մականշման մեջ գրված չէ, թե դրանում բնական (անարատ) կաթի քանակը որքան է և որքան է կաթի փոշու քանակը»:*

¹ ՀՀ կառավարության 11.11.1998թ. թիվ 706, 10.04.2003թ. թիվ 413-Ն, 15.05.2003թ. թիվ 587-Ն, 31.07.2003թ. թիվ 961-Ն, 21.12.2006թ. թիվ 1836-Ն, 31.05.2007թ. թիվ 730-Ն որոշումները, ՀՀ առողջապահության նախարարի 12.12.2006թ. թիվ 1437-Ն, 20.10.2008թ. թիվ 21-Ն հրամանները:

Այսպես օրինակ, մեջբերում կայքից. «Դասական» թթվասեր 18%

Բաղադրությունը՝ կովի նորմալացված կաթի սեր (անարատ կաթ, չոր անարատ կաթ, չոր անյուղ կաթ, կարագ, կաթնային յուղ), թթվասերի մակարդ (մեզոֆիլ կաթնաթթվային կուլտուրաներ):

100գ-ը պարունակում է յուղ՝ 18գ, սպիտակուցներ՝ 2.8գ, ածխաջրեր՝ 3գ:

Էներգետիկ արժեքը 100գ-ում՝ 185.2կկալ:

Պահպանել 2-6°C:

«Դասական» կաթնաշոռ 7%

Բաղադրությունը՝ կովի նորմալացված կաթ (անարատ կաթ, չոր անարատ կաթ, չոր անյուղ կաթ), կաթնաշոռի մակարդ:

100գ-ը պարունակում է յուղ՝ 7գ, սպիտակուցներ՝ 16գ, ածխաջրեր՝ 2.2գ:

Էներգետիկ արժեքը 100գ-ում՝ 135.8կկալ:

Պահպանել 2-6°C:

Չուտ քաշը՝ 200գ²:

Ինչպես տեսնում ենք, նշում չկա այն մասին, թե որքան է կազմում անարատ (բնական) կաթը, որքան չոր անարատ կաթը (կաթի փոշին), որքան չոր անյուղ կաթը և այլն:

Նման պայմաններում գտնում եմ, որ դատարանը նման եզրահանգման է եկել ապացույցները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ և 24-րդ հոդվածների խախտմամբ գնահատելով, քանի որ Ընկերության www.ashtarakkat.com կայքում տեղադրված կաթնամթերքի որևէ արտադրատեսակի մեջ անարատ կաթի, անարատ չոր կաթի՝ կաթի փոշու քանակության վերաբերյալ տեղեկատվություն տեղադրված չէ, այն դեպքում, երբ հենց այդ տեղեկությունն է հետաքրքրեալ Կազմակերպությանը:

Ավելին, նման մակնշումը չի համապատասխանում նաև դատարանի վկայակոչած կանոնակարգի 4-րդ մասի 5-րդ բաժնի 38-րդ կետի պահանջներին, որի «ը» ենթակետի համաձայն՝ ՀՀ-ում իրացվող կաթի և կաթնամթերքի փաթեթվածքի կամ սպառողական տարայի վրա անմիջապես կամ դրան փակցված պիտակին պետք է լինի հետևյալ բովանդակությամբ մականշվածք՝ ը) մթերքի բաղադրությունը. Մթերքի բաղադրությունը նշում են դրա բաղադրամասերի անվանացանկով՝ «Բաղադրությունը» վերնագրով:

Պատրաստի մթերքի բաղադրության մեջ չմտնող, բայց արտադրական գործընթացի համար գործնականորեն անհրաժեշտ վերամշակման նյութերը նշում են «Օգտագործելով» բառից հետո. «Մթերքի բաղադրության մեջ «անարատ կաթի», «անարատ չոր կաթի», «չոր յուղազերծ կաթի», «կաթնային չոր շիճուկի» և (կամ) «անարատ չոր սերուցքի» զանգվածային մասերը՝ տոկոսներով»:

Ընկերության արտադրանքի մակնշման մեջ նշված չէ նաև անարատ կաթի զանգվածային մասերը՝ տոկոսներով, ինչը նշանակում է, որ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի նորմի խախտում, սխալ մեկնաբանելով վերը նշված կանոնակարգի դրույթները:

Բողոքի նշված հատվածի վերաբերյալ դատարանը պատճառաբանել է. «Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից Կանոնակարգի 4-րդ մասի 5-րդ բաժնի 38-րդ կետի երկրորդ պարբերությամբ զետեղված նորմին կատարված հղմանը, ապա վերաքննիչ դատարանը փաստում է, որ դրանով սահմանված մթերքի բաղադրության մեջ «անարատ կաթի», «անարատ չոր կաթի», «չոր յուղազերծ կաթի», «կաթնային չոր շիճուկի» և (կամ) «անարատ չոր սերուցքի» զանգվածային մասերը՝ տոկոսներով նշելու պահանջը բացառապես վերաբերվում է պատրաստի մթերքի բաղադրության մեջ չմտնող, բայց արտադրական գործընթացի համար գործնականորեն անհրաժեշտ վերամշակման նյութերին, որպիսի պահանջը որևէ կերպ չի կարող վերաբերել հարցմամբ մատնաշված մթերքին կաթնամթերքին»:

Սա բողոքարկվող որոշման ամենակարևոր և իրավակիրառ պրակտիկայի ձևավորման առումով ամենավտանգավոր պատճառաբանությունն է: Նշված

² Բողոքի նշված հատվածը մուք է, քանի որ Ընկերության կայքից է արտատպվել և հնարավոր չէ ֆոնը սպիտակացվել:

պատճառաբանությամբ, փաստորեն, դատարանը գտնում է, որ արտադրողը պարտավոր չէ մակնշել պատրաստի կաթնամթերքի բաղադրության մեջ մտնող «անարատ կաթի», «անարատ չոր կաթի», «չոր յուղագերծ կաթի», «կաթնային չոր շիճուկի» և (կամ) «անարատ չոր սերուցքի» զանգվածային մասերը՝ տոկոսներով:

Վերաքննիչ դատարանի նման մեկնաբանությունը անիմաստ է դարձնում Կանոնակարգն ընդհանրապես, քանի որ դրա իմաստը հենց կաթնամթերքի փաթեթի վրա դրա բաղադրության նշումն է, այլ ոչ թե՝ չնշումը:

Այսպես, Կանոնակարգն ընդունվել է Կառավարության 21 դեկտեմբերի 2006 թվականի N 1925-Ն որոշմամբ, որում նշված է. «*«Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան, ինչպես նաև ելնելով մարդու կյանքի ու առողջության անվտանգության ապահովման և սպառողներին թուրիմացության մեջ զգող գործոնների կանխարգելման անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է»:*

Դատարանի սխալ հետևության հիմքում ամենայն հավանականությամբ ընկած է կանոնակարգում առկա տեխնիկական վրիպակը, որը, սակայն, չպետք է հիմք տար նման դատական ակտի կայացման համար:

Այսպես, Կանոնակարգի V մասը վերնագրված է «Կաթի եվ կաթնամթերքի մակնշմանը եվ փաթեթավորմանը ներկայացվող պահանջները», որի 38-րդ կետի ը) ենթակետի համաձայն. «*Հայաստանի Հանրապետությունում իրացվող կաթի և կաթնամթերքի փաթեթավածքի կամ սպառողական տարայի վրա անմիջապես կամ դրան փակցված պիտակին պետք է լինի հետևյալ բովանդակությամբ մականշվածք՝*

ը) մթերքի բաղադրությունը.

Մթերքի բաղադրությունը նշում են դրա բաղադրամասերի անվանացանկով՝ «Բաղադրությունը» վերնագրով: Պատրաստի մթերքի բաղադրության մեջ չմտնող, բայց արտադրական գործընթացի համար գործնականորեն անհրաժեշտ վերամշակման նյութերը նշում են «Օգտագործելով» բառից հետո.

Մթերքի բաղադրության մեջ «անարատ կաթի», «անարատ չոր կաթի», «չոր յուղագերծ կաթի», «կաթնային չոր շիճուկի» և (կամ) «անարատ չոր սերուցքի» զանգվածային մասերը՝ տոկոսներով»:

Վերաքննիչ դատարանին, ամենայն հավանականությամբ շփոթի և սխալ հետևության մեջ է զգել «*Պատրաստի մթերքի բաղադրության մեջ չմտնող, բայց արտադրական գործընթացի համար գործնականորեն անհրաժեշտ վերամշակման նյութերը նշում են «Օգտագործելով» բառից հետո.*» նախադասության «հետո» եզրույթից հետո դրված միջակետը, որը տեխնիկական վրիպակի արդյունք է, քանի որ պետք է լիներ վերջակետ: Դրա արդյունքում էլ վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ. «*Մթերքի բաղադրության մեջ «անարատ կաթի», «անարատ չոր կաթի», «չոր յուղագերծ կաթի», «կաթնային չոր շիճուկի» և (կամ) «անարատ չոր սերուցքի» զանգվածային մասերը՝ տոկոսներով»* նախադասությունը վերը մեջբերված նախադասության բացահայտիչն է և դրա համար էլ թույլ է տվել դատական սխալ:

Այն, որ Կանոնակարգի 38-րդ կետի ը) ենթակետում գետնեղված «*Մթերքի բաղադրության մեջ «անարատ կաթի», «անարատ չոր կաթի», «չոր յուղագերծ կաթի», «կաթնային չոր շիճուկի» և (կամ) «անարատ չոր սերուցքի» զանգվածային մասերը՝ տոկոսներով»* նախադասությունը դրա նախորդ նախադասությունից առանձին նախադասություն է, ավելին, նոր միտք է արտահայտում, հաստատվում է նրանով, որ այդ նախադասությունը սկսվում է **մեծատառով**, այն դեպքում, երբ միջակետից հետո նոր նախադասություն չի սկսվում, այլ փոքրատառով, որպես բացահայտիչ շարունակվում է նախադասությունը, ինչպես օրինակ Կանոնակարգի մնացած բոլոր հատվածներում:

Բացի այդ, նշված պարբերությունը Կանոնակարգն ընդունելիս չի եղել և այդ ժամանակ կանոնակարգի այդ հատվածը ունեցել է հետևյալ բովանդակությունը.

«ը) մթերքի բաղադրությունը.

Մթերքի բաղադրությունը նշում են դրա բաղադրամասերի անվանացանկով՝ «Բաղադրությունը» վերնագրով: Պատրաստի մթերքի բաղադրության մեջ չմտնող, բայց արտադրական գործընթացի համար գործնականորեն անհրաժեշտ վերամշակման նյութերը նշում են «Օգտագործելով» բառից հետո.

թ) սննդային հավելումները, բուրավետիչները, կենսաբանորեն ակտիվ»:

Կանոնակարգը նոր պարբերությամբ լրացվել է ՀՀ կառավարության՝ 17 սեպտեմբերի 2009 թվականի N 1057-Ն որոշմամբ, որով սահմանվել է. «1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1925-Ն որոշման հավելվածի 38-րդ կետի «ը» ենթակետն առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ **նոր պարբերությամբ.**

«Մթերքի բաղադրության մեջ «անարատ կաթի», «անարատ չոր կաթի», «չոր յուղագերծ կաթի», «կաթնային չոր շիճուկի» և (կամ) «անարատ չոր սերուցքի» զանգվածային մասերը՝ տոկոսներով»»:

Այսպիսով, իրականում նշված պարբերությամբ սահմանվում է, թե կաթնամթերքի բաղադրության մեջ ինչ պետք է նշվի և ոչ թե հակառակը:

Վերը նշվածց հետևում է, որ վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Կանոնակարգի 38-րդ կետի ը) ենթակետը և թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, ինչն էլ հանգեցրել է դատական սխալի:

Նյութական իրավունքի նշված խախտումը դատական սխալի է հանգեցրել այն պատճառով, որ Ընկերության կաթնամթերքի փաթեթավորման վրա բաղադրության մեջ «անարատ կաթի», այսինքն՝ բնական կաթի, «անարատ չոր կաթի», այսինքն՝ կաթի փոշու, «չոր յուղագերծ կաթի», «կաթնային չոր շիճուկի» և (կամ) «անարատ չոր սերուցքի» զանգվածային մասերը՝ տոկոսներով մակնշված չլինելու պայմաններում վերաքննիչ դատարանը գտել է, որ համապատասխան արտադրատեսակներին կատարված հղումը պատշաճ պատասխան է:

Վերը նշված խախտումը նույնպես հանգեցրել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օերքնի 12-րդ հոդվածի 3-րդ կետի, այլև՝ 14 հոդվածի խախտման և դատական սխալի:

Վերը՝ երեք կետերում նշված խախտումների արդյունքում վերաքննիչ դատարանը սխալ հետևություն է արել այն մասին, որ Պատասխանողը վարչական պատասխանատվության ենթակա չէ, դրանով իսկ խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 187.7 հոդվածի պահանջը և վարչական իրավախախտում կատարած անձին ազատելով վարչական պատասխանատվությունից:

Գտնում են, որ վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները հանգեցրել են դատական սխալի և դատական ակտի բեկանման հիմք են:

III. Բողոքը քննության ընդունելու հիմնավորումները

Գտնում են, որ առկա է վճռաբեկ բողոքը քննության ընդունելու՝ ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմնավորումը, այն է՝ վերաքննիչ դատարանը առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը ազդել գործի ելքի վրա:

Սույն բողոքի II. մասում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150, 151 և 152 հոդվածներով նախատեսված սահմաններում մանրամասն նկարագրված են թե՛ նյութական և թե՛ դատավարական իրավունքի խախտումները և պատճառաբանված է, թե այդ խախտումներն ինչու են հանգեցրել դատական սխալի, ուստի խնդրում են այդ պատճառաբանությունները ընդունել որպես բողոքը վարույթ ընդունելու հիմնավորում:

Վերոգրյալից ելնելով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19.1 գլխի պահանջների համաձայն

Խնդրում եմ

Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի թիվ ՎԴ/0092/05/12 գործով 23.03.2013թ. որոշումը, այն փոփոխել և հայցը բավարարել, անդրադառնալով նաև դատական ծախսերի (այդ թվում հայցվորի կոմից փաստաբանին վճարված գումարի) հարցին:

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին

Նկատի ունենալով այն, որ բողոք բերող «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն շահույթ ստանալու նպատակ չհետապնդող հասարակական կազմակերպություն է և այս պահին հնարավորություն չունի վճարել պետական տուրքը, սակայն պատրաստ է այն վճարել և ցանկանում է իր իրավունքների դատական պաշտպանության իրավունքից օգտվել, ուստի ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21 և 22 հոդվածներով

Խնդրում եմ

Պետական տուրքի վճարումը հետաձգել:

ՊԱՐՋԱԲԱՆՈՒՄ:

Նկատի ունենալով այն, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից տրված լիազորագրի բնօրինակը, որում նշված է նաև վճռաբեկ բողոք բերելու լիազորությունը, գտնվում է գործի մեջ և ձեռքիս տակ չունեն լիազորագրի այլ տարբերակ, սույն բողոքին կից լիազորագիրը չի կցվում, սակայն լրացուցիչ կներկայացվի:

Նկատի ունենալով այն, որ բողոքը ուղարկվում է փոստային առաքմամբ և բողոքի էլեկտրոնային կրիչը կցելու դեպքում այն կարող է վնասվել, բողոքի էլեկտրոնային կրիչը ՀՀ վճռաբեկ դատարանում մուտք կարվի առաջիկա օրերին, այն հաշվարկով, որ վճռաբեկ բողոքն արդեն ստացված լինի:

Կից ներկայացվում է բողոքը պատասխանողին և ՀՀ վարչական վերաքննիչ դատարան ուղարկելու մասին ապացույցներ:

Ներկայացուցիչ՝

Կարեն Մեժլումյան